Ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման պլան

Սահմանամերձ մարզային մեդիայի համար

Բովանդակություն

Ներածություն և նախապատմություն

- Պլանի նպատակը և առաքելությունը։
- Տավուշի մարզի համառոտ նկարագրություն։
- Նախկինում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների վերլուծություն։
- Իրավական հիմքեր և կարգավորումներ։

Ռիսկերի գնահատում և սցենարներ

- Հնարավոր ճգնաժամային իրավիճակների դասակարգում։
- Յուրաքանչյուր սցենարի ռիսկերի վերլուծություն։
- Խոցելի խմբերի և կարիքների գնահատում։

Ռազմավարություն և սկզբունքներ

- Հիմնական արժեքներ և էթիկական սկզբունքներ։
- Տեղեկատվության տարածման ռազմավարություն։
- Հաղորդակցության քաղաքականություն։

Կազմակերպչական կառուցվածք և դերաբաշխում

- Ճգնաժամային կառավարման անձնակազմ։
- Պատասխանատվությունների բաշխում։
- Որոշումների կայացման մեխանիզմ։
- Հերթապահման համակարգ։

Գործողությունների պլան՝ ըստ փուլերի

- Նախապատրաստական գործողություններ։
- Ճգնաժամի վաղ փուլի գործողություններ։
- Ճգնաժամի գագաթնակետի գործողություններ։
- Վերականգնողական գործողություններ։

Հաղորդակցություն և համագործակցություն

- Ներքին հաղորդակցության պլան։
- Արտաքին հաղորդակցության պլան։
- Համագործակցության մեխանիզմներ գործընկերների հետ։
- Միջազգային կապեր և աջակցություն։

Լրատվական գործառույթներ

- Տեղեկատվության հավաքագրման և ստուգման մեթոդներ։
- Բովանդակության ստեղծման ուղեցույցներ ճգնաժամի ժամանակ։
- Ապատեղեկատվության դեմ պայքարի մեխանիզմներ։
- Տարբեր հարթակների օգտագործման ռազմավարություն։

Տեխնիկական ապահովում և անվտանգություն

- Տեխնիկական միջոցների պահուստավորում։
- Էներգամատակարարման այլընտրանքային աղբյուրներ։
- Ցանցային և ֆիզիկական անվտանգության միջոցներ։
- Տվյալների պահպանման և պաշտպանության գործիքներ։

Աշխատակիցների անվտանգություն և աջակցություն

- Անվտանգության կանոններ դաշտային աշխատանքի համար։
- Հոգեբանական աջակցության միջոցներ։
- Վերապատրաստման ծրագրեր։

Ռեսուրսների կառավարում

- Բյուջետավորում ճգնաժամի համար։
- Նյութատեխնիկական ռեսուրսների պահուստավորում։
- Մարդկային ռեսուրսների կառավարում։

Պլանի փորձարկում և թարմացում

- Վարժանքների և սիմուլյացիաների ծրագիր։
- Պլանի պարբերական վերանայման մեխանիզմ։
- Փորձից դասեր քաղելու մեթոդաբանություն։

Հավելվածներ

- Կոնտակտային տվյալների ցանկ։
- Ստանդարտ գործողությունների ընթացակարգեր։
- Ձևաթղթեր և ստուգաթերթեր։
- Քարտեզներ և տարհանում ուղիներ։

Ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման պլանի նպատակն է հզորացնել տեղեկատվական անվտանգությունը, բացառել կեղծ ու սուտ լուրերի, ինչպես նաև՝ խուճապի տարածումը, նպաստել ճշգրիտ և օպերատիվ ճգնաժամային հաղորդակցությանը, ամրապնդել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների և բիզնեսների հետ սահմանամերձ մարզային մեդիայի համագործակցությունն արտակարգ իրավիճակներից առաջ, դրանց ժամանակ և հետո:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մարզկենտրոնը
ք. Իջևան

Տարածաշրջանները
Իջևան
Դիլիջան
Նոյեմբերյան
Տավուշ

Քաղաքները՝
Իջևան
Դիլիջան
Բերդ
Նոյեմբերյան
Այրում

Տարածքը	2 704 քառ.կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	9.1
Համայնքներ, 2020 թ. տարեսկզբի դրությամբ	24
Քաղաքներ	5
Գյուղեր	60
Բնակչության թվաքանակը 2020թ. տարեսկզբի դրությամբ	121.5 հազ.մարդ
այդ թվում՝	
քաղաքային	51.4 հազ.մարդ
գյուղական	70.1 հազ.մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019թ., %	4.1

Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019թ., %	42.3
Գյուղատնտեսական նշանակության հողեր	110 700.4 հա
այդ թվում՝ վարելահողեր	25 579.2 հա

Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ Լոռու մարզին և պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին: Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝390 մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2 993 մ: Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է Հայաստանի Հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1 900 -2 100 ժամ է, անարև օրերի թիվը՝ 65: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային
ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

Մարզի ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին: Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայման- ները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Իջևան քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Ենոքավան գյուղի վարչական տարածքի (ծովի մակերևույթից 1 370 մ բարձրությամբ) 7 հա տարածության վրա գործում է Հայաստանում նախադեպը չունեցող էքսթրիմի և զվարճանքների պարկը, որտեղ տարեցտարի ավելանում են ակտիվ հանգստի տեսակները, ինչպես նաև ջրային սպորտաձևերը: Այցելուների թվաքանակի աճը վկայում է, որ այն ուշագրավ է դարձել նաև արտերկրից ժամանող զբոսա- շրջիկների համար և կխթանի էկոտուրիզմի զարգացումը երկրում:

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս–Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ

հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը (ներկայում չի գործում): Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան- Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Մարզի 47 բնակավայրեր սահմանամերձ են Ադրբեջանին և ունեն ռազմավարական կարևոր նշանակություն՝ մշտապես կրելով պատերազմական իրադարձությունների հետևանքներ: Դրանով է պայմանավորված նաև այդ բնակավայրերի մեծ մասի քիչ բնակեցվածությունն ու տնտեսապես թույլ զարգացվածությունը:

2019թ.-ին Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.5%,
- գյուղատնտեսություն՝ 4.4%,
- շինարարություն՝ 3.8%,
- մանրածախ առևտուր՝ 2.4%,
- ծառայություններ՝ 1.0%:

Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին իրագործված բազմաթիվ խթանող գյուղատնտեսական ծրագրերի շնորհիվ մեծ զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հան- քային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Իջևան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 20.3 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 133 կմ հեռավորության վրա: Մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝սննդամթերքի և գինու արտադրությունը) : Իջևան քաղաքի գորգերը նախկինում շատ մրցունակ են եղել ներքին և արտաքին շուկաներում, սակայն վերջին տարիներին այդ գործունեությամբ գրեթե չեն զբաղվում: Աստիճանաբար նվազում է ապրում նաև փայտամշակումը :

Դիլիջան քաղաքի (2020թ. տարեսկզբին՝17.3 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 99 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական

ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը: 2014թ. սեպտեմբերից գործում է «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը, իսկ 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը:

Քաղաքի ճարտարապետական տեսքին առանձնակի վայելչություն է տալիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնաճյուղն իր օժանդակ կառույցներով:

Ներկայում մեծ աշխատանքներ են տարվում բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային զբոսաշրջության զարգացման ոլորտում քաղաքի երբեմնի ունեցած համբավի վերականգնման ուղղությամբ:

Նոյեմբերյան քաղաքի (2020թ. տարեսկզբին՝4.5 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 187 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է: Վերջին տարիներին մեծ զարգացում է ապրում նաև քարի արտադրությունը:

Այրում քաղաքի (2020թ. տարեսկզբին՝ 1.8 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 206 կմ է: Այն կայարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղմունքը մանրածախ առևտուրն է:

Վերջին տարիներին Նոյեմբերյանի տարածքում լայն թափով զարգանում է պտղաբուծությունը, հատկապես՝ դեղձի այգիների հիմնումը, ինչը կնպաստի Այրումի պահածոների գործարանի վերագործարկմանը:

Բերդ քաղաքի (2020թ. տարեսկզբին՝ 7.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 202 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում գերակշռողը բազմաճյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը: Քաղաքի տնտեսական զարգացման գործում մեծ նշանակություն ունի վերջերս գործարկված տեքստիլ արտադրության կազմակերպությունը, որը նաև սահմանապահ բնակավայրերի բնակչության զբաղվածության և միգրացիոն արտահոսքի կանխման խնդիրներ է լուծում:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻՆ ՊԱՏՈՒՀԱՍԱԾ ԵՎ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԻՆՉ ՊԱՏԿԵՐ ՈՒՆԵՆՔ ԱՅՍՕՐ:

Տավուշի մարզին պատուհասել ու սպառնում են բնական ու տեխնածին, համաճարակային ու բնապահպանական, սոցիալական ու քաղպաշտպանական (պատերազմական) բազմաթիվ վտանգներ:

Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1997 թվականի հուլիսի 18-ին, բազմաթիվ շենքեր են վնասվել Նոյեմբերյան քաղաքում, Կողբ, Բերդավան,Դովեղ գյուղերում:

- Տավուշի մարզում զգալի երկրաշարժեր են արձանագրվել 2021, 2022, 2023 և 2024թթ.
- 1998 թվին հեղեղումը մեծ վնաս հասցրեց Իջևան քաղաքին:
- 2023թ հունիս, աննախադեպ կարկուտ, հորդառատ անձրև, քամու ուժգնացում ու ջրածածկում Իջևանում:
- 2024թ. մայիս, տեղատարափ անձրևներ, Դեբեդ և Աղստև գետերի վարարում: Հեղեղումների պատճառով՝ 4 զոհ, փլուզված 3 կամուրջ, բնակելի 3 տուն, ջրալցված 45 տուն, 2 հյուրանոց, 18 հասարակական և այլ նշանակության օբյեկտ, փլուզված ճանապարհներ:
- Մարզի տասնյակ գյուղեր ու հաղորդակցության ուղիներ անընդհատ վնասներ են կրում սողանքներից. առանձնապես խնդրահարույց են Գետահովիտ, Հովք, Հաղարծին, Լճկաձոր, Ակնաղբյուր, Վազաշեն, Դիլիջան, Գոշ, Աչաջուր, Ծաղկավան համայնք-բնակավայրերի սողանքները: Հատկապես վտանգավոր ու մահաբեր էին Հաղարծնի, Հովքի և Լճկաձորի սողանքները:
- Երկրաշարժից, ջրհեղեղից ու սողանքից զատ մարզին սպառնում են նաև ուժեղ քամիներն ու կարկուտը, քարաթափումները, ցրտահարությունները, ջրամբարի պատվարի փլուզումները, մասնավորապես՝ Այգեպարի և Այգեձորի:
- Մշտական սպառնալիք են կոմունալ-էներգետիկ ցանցերի վթարները, ջրային և շմոլ գազից թունավորումները, համաճարակները, հրդեհները, հատկապես՝ անտառային հրդեհները, ճանապարհատրանսպորտային պատահարները:
- Խոցելիությունն աղետներից ու զինված հակամարտությունից բարձր է: Վտանգի ենթակա տարածքները շատ են ու ընդգրկուն՝ բնակավայրեր, հաղորդակցության ուղիներ, գյուղատնտեսական հողատարածքներ, էկոհամակարգեր:
- Բնակչության ու համայնքների դիմակայունությունն աղետներին ու տարաբնույթ մարտահրավերներին՝ թույլ է, կարողությունները՝ քիչ, ռիսկերը՝ բազմաթիվ ու բարձր:
- ՀՀ Տավուշի մարզն ավելի քան 300 կմ սահման ունի Ադրբեջանի հետ, սահմանամերձ են մարզի 47 բնակավայրեր, որոնցից 27-ն՝ ուղիղ նշանառության տակ:
- Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության, ընդգրկվածությունն աղետների ռիսկի կառավարմանը նվազ է, մոտիվացումը՝ թույլ, իրազեկվածությունը՝ ցածր, կենսական և անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը՝ սահմանափակ, կանխարգելման աշխատանքների համար ֆինանսավորումն՝ աննշան՝ ապահովագրությունն աղետներից՝ դեռ չկայացած:

1. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

1.1 Հիմնական ռիսկեր

- Ռազմական գործողություններ և պատերազմական իրավիճակ
- Բնական աղետներ (երկրաշարժ, սելավ, ջրհեղեղ, սողանքներ, անտառային հրդեհներ)
- Տեխնածին աղետներ՝ թունավորումներ, պայթուններ։
- Համաճարակային իրավիճակներ
- Կիբեռհարձակումներ և տեղեկատվական պատերազմ
- Էլեկտրամատակարարման խափանում
- Ինտերնետ կապի խափանում

2. Տեխնիկական պատրաստվածության պլան

2.1 Էլեկտրամատակարարման խափանման դեպքում

- Գեներատորների առկայություն և պահպանում
- Վառելիքի պաշարների ապահովում (նվազագույնը 7 օրվա համար)
- Լիցքավորվող սարքերի և պահեստային մարտկոցների առկայություն
- Արևային մարտկոցների համակարգի տեղադրում (երկարաժամկետ լուծում)

2.2 Ինտերնետ կապի խափանման դեպքում

- Արբանյակային ինտերնետի պահեստային կապ
- Ռադիոկապի սարքավորումների առկայություն
- Բջջային ինտերնետի մոդեմներ տարբեր օպերատորներից
- Mesh ցանցի ստեղծում տեղական հաղորդակցության համար

3. Անձնակազմի գործողությունների պլան

3.1 Հաղորդակցության պահեստային համակարգ

- WhatsApp/Telegram/Signal խմբեր՝ հիմնական և պահեստային
- Ռադիոկապի սարքեր անձնակազմի առանցքային անդամների համար
- Հանդիպման վայրերի նախապես որոշված ցանկ
- Գաղտնի կոդերի համակարգ հաղորդագրությունների վավերականության համար

3.2 Անձնակազմի պարտականությունները ճգնաժամային իրավիճակում

- Խմբագրական կազմի հերթապահություն 24/7 ռեժիմով
- Լրագրողների աշխատանքային խմբերի բաժանում
- Տեխնիկական անձնակազմի հերթափոխային գրաֆիկ
- Անվտանգության միջոցառումների պատասխանատուներ,
- Օպերատիվ իրավիճակի մասին զեկուցումներ

4. Հակազդման պլան հարձակումների դեպքում

4.1 Ֆիզիկական հարձակում

- Անվտանգության ծառայության հետ համագործակցություն
- Տարահանման պլան
- Իրավապահ մարմինների հետ կապի պրոտոկոլ
- Բժշկական օգնության արագ արձագանքման պլան

4.2 Կիբեռհարձակում

- Տվյալների պարբերական պահուստավորում
- Հակավիրուսային համակարգերի թարմացում
- DDoS հարձակումների դեմ պաշտպանություն
- Կիբեռանվտանգության փորձագետների հետ պայմանագրեր

4.3 Տեղեկատվական հարձակում

- Փաստերի ստուգման արագ արձագանքման խումբ
- Իրավաբանական պաշտպանության թիմ
- Հակազդման հաղորդակցային ռազմավարություն
- Դեզինֆորմացիայի վերլուծության մեթոդաբանություն
- Կապ՝ մարզում տեղեկատվության աշխատակիցների հետ

5. Համագործակցության պլան

ՇԱՐԺԱԿԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՅՈՒՄ ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻՆ, ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՆ ԿԱՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՆ ԿԻՑ

- Մոբայլ լրագրողական կետերի ստեղծում
- Տեղական թղթակցների ցանցի ընդլայնում
- Հեռավար աշխատանքի արագ անցման մեխանիզմներ
- Ստորգետնյա պաշտպանված տարածքների կիրառում ապաստարանների մոնիթորինգ և կապով տարածքի ընտրություն՝ այլընտրանքային վայր ստուդիայի գործունեության համար։
- Տարածաշրջանային մեդիա ցանցի ստեղծում (Լոռի ՀԸ, «Ֆորտունա ՀԸ», «Անկյուն+3. Ալավերդի ՀԸ», «Գեղամա» մեդիա հոլդինգ, «Ցայգ ՀԸ», «Սյունիք ՀԸ»)
- Տեղական և միջազգային մեդիա կազմակերպությունների հետ համագործակցություն
- Այլընտրանքային հաղորդակցության ուղիների կիրառում

5.1 Պետական մարմինների հետ

- Ներքին գործերի նախարարություն (Փրկարար ծառայություն, ոստիկանություն)
- Պաշտպանության նախարարություն
- Մարզպետի աշխատակազմ

- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Արագ արձագանքման այլ ծառայություններ

5.2 Բնակչության հետ հաղորդակցություն

- Հստակ և ճշգրիտ տեղեկատվության տարածման ընթացակարգեր
- Հետադարձ կապի մեխանիզմներ
- Տեղեկատվական թեժ գծեր
- Սոցիալական ցանցերի կառավարման ռազմավարություն

6. Պարբերական վերապատրաստում և թարմացում

6.1 Անձնակազմի ուսուցում

- Ամսական վարժանքներ
- Տարեկան սիմուլյացիաներ
- Առաջին օգնության դասընթացներ
- Տեխնիկական հմտությունների զարգացում

6.2 Պլանի թարմացում

- Եռամսյակային վերանայում
- Նոր ռիսկերի գնահատում
- Լավագույն փորձի ուսումնասիրություն
- Անցյալ միջադեպերի վերլուծություն
- Միջազգային կավագույն փորձի ուսումնասիրություն և տեղայնացում

ՄԵԴԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՄԱՐԶԻ ՄԵԴԻԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Տարհանման նախապատրաստական փուլ

1.1 Փաստաթղթերի և սարքավորումների պատրաստում

- Կարևոր փաստաթղթերի թվայնացում և պահպանում ամպային համակարգերում
- Սերվերների տվյալների կրկնօրինակում հեռավար վայրերում
- Շարժական տեխնիկայի ցանկի կազմում (լափթոփներ, պլանշետներ, տեսախցիկներ)
- Անձնական փաստաթղթերի պատճենների պահպանում
- Պահեստային սարքավորումների պահեստի ստեղծում անվտանգ վայրում

1.2 Անձնակազմի նախապատրաստում

- Յուրաքանչյուր աշխատակցի համար անհատական տարհանման փաթեթի կազմում
- Տարհանման երթուղիների և հավաքատեղիների քարտեզագրում
- Անձնակազմի դերերի և պարտականությունների հստակ բաշխում
- Ընտանիքի անդամների տարհանման պլանների համաձայնեցում
- Աշխատակիցների հատուկ կարիքների հաշվառում

2. Տարհանման պահեստային վայրեր

Պայմանավորվել՝ թե որ բնակավայրերում՝ Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ և կամ որ կազմակերպություններում կարող ենք տեղակայվել

Համայնք	Վայր	Հասցե
Իջևան	*Իրական դպրոց*	
Դիլիջան	*Դիլիջանի կենտրոնական դպրոց*	
Բերդ	*«Տավուշ» հիմնադրամ*	
Նոյեմբերյան	*«Նոյեմբերյանի սոցիալ-կրթական կենտրոն»*	

- Մոբայլ լրագրողական կետերի ստեղծում
- Տեղական թղթակցների ցանցի ընդլայնում
- Հեռավար աշխատանքի արագ անցման մեխանիզմներ

2.1 Հիմնական պահեստային վայր

- Նախապես պայմանավորված շենք/տարածք անվտանգ գոտում
- Հիմնական տեխնիկական ենթակառուցվածքների առկայություն
- Ինտերնետ կապի երաշխավորված հասանելիություն
- Գեներատորի և վառելիքի պաշարների առկայություն
- Հիմնական կենսական պայմանների ապահովում
- Ստորգետնյա պաշտպանված տարածքների կիրառում

2.2 Երկրորդային պահեստային վայրեր

- Առնվազն երկու այլընտրանքային վայրեր տարբեր ուղղություններում
- Փոքր խմբերի համար նախատեսված աշխատանքային տարածքներ
- Մոբայլ աշխատանքային կետերի ցանց
- Համագործակցություն տեղական կազմակերպությունների հետ

3. Տարհանման գործողությունների հաջորդականություն

3.1 Անմիջական արձագանքման փուլ (0-2 ժամ)

- Տարհանման ազդանշանի ակտիվացում
- Արագ արձագանքման թիմի մոբիլիզացիա
- Կարևոր սարքավորումների և փաստաթղթերի հավաքում
- Անձնակազմի հաշվառում և խմբավորում
- Տրանսպորտային միջոցների պատրաստում ովքեր մեքենա ունեն, քանի մեքենա կա, բնակավայր, ընտանիք՝ ուր պիտի տեղափոխեն

3.2 Տարհանման իրականացման փուլ (2-6 ժամ)

- Անձնակազմի անվտանգ տեղափոխում
- Սարքավորումների տեղափոխում
- Պահեստային վայրի գործարկում
- Հեռավար աշխատանքի անցում
- Ընթացիկ իրավիճակի լուսաբանման շարունակականություն

4. Լավագույն փորձի օրինակներ

5. Հետտարհանման գործողություններ

5.1 Առաջին 24 ժամ

- Անձնակազմի անվտանգության ստուգում
- Սարքավորումների վիճակի գնահատում
- Աշխատանքի շարունակականության ապահովում
- Պետական մարմինների հետ կապի հաստատում
- Միջազգային գործընկերների իրազեկում

5.2 Հետագա գործողություններ

- Վնասների գնահատում
- Ապահովագրական հայցերի ներկայացում
- Երկարաժամկետ վերաբնակեցման պլանի մշակում
- Աշխատակիցների հոգեբանական աջակցություն
- Տարհանման պլանի վերանայում և թարմացում

ՄԵԴԻԱՅԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԽԱՆԳԱՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԶԴՈՒՄ

Տարածքի ռմբակոծում

- Հիմնական գրասենյակից բացի հեռավար/վարագույրային աշխատանքի համար առնվազն 2-3 այլընտրանքային վայրերի նախապես որոշում։
- Ապաստարանների և անվտանգ տարածքների քարտեզագրում։
- Շենքի ամրացման և պաշտպանիչ միջոցների տեղադրում (ապակիների ամրացում հատուկ ժապավեններով, պատուհանների բլոկադա ավազապարկերով)։
- Անվտանգության համակարգերի ստուգում և թարմացում (կրակմարիչներ, առաջին օգնության պայուսակներ)։
- Արտակարգ ազդանշանի համակարգի ներդրում։

Էլեկտրականության անջատում

- Գեներատորների կանխավ ձեռքբերում և պատրաստ վիճակում պահում (վառելիքի պահուստ)։
- Արևային պանելների և մարտկոցների ներդրում։
- Power Bank-երի և լիցքավորվող սարքերի պահուստի ստեղծում։
- Ցածր էներգիայի սպառմամբ սարքավորումների ձեռքբերում։
- Ինտերնետի այլընտրանքային աղբյուրների ապահովում (Starlink, մի քանի տարբեր օպերատորների մոդեմներ)։

Կապի խափանում

- Ռադիոկապի սարքերի ձեռքբերում և օգտագործման ուսուցում։
- Տարբեր օպերատորների SIM քարտերի առկայություն։
- Mesh ցանցերի հնարավորության ուսումնասիրություն։

2. Անձնակազմի ճգնաժամային կառավարում

Կազմակերպչական կառուցվածք

- Ճգնաժամային կառավարման փոքր թիմի ձևավորում (3-5 հոգի)։
- Պատասխանատվությունների հստակ բաշխում և փոխարինողների նշանակում։
- Որոշումների արագ կայացման ընթացակարգերի սահմանում։
- Ճգնաժամային իրավիճակներում լիազորությունների պատվիրակման կարգ։

Անձնակազմի պատրաստվածություն

- Արտակարգ իրավիճակներում գործելու կանոնների վերապատրաստում։
- Առաջին օգնության դասընթացներ։
- Հոգեբանական դիմակայունության ձևավորման դասընթացներ։
- Պարբերական վարժանքներ և սիմուլյացիաներ։

Աշխատանքի կազմակերպում ճգնաժամի ժամանակ

- Հերթափոխերի օպտիմալ պլանավորում՝ հաշվի առնելով աշխատակիցների անվտանգությունը։
- Հեռավար աշխատանքի հնարավորության ապահովում։
- Տնից աշխատող և գրասենյակում աշխատող թիմերի հստակ բաշխում։
- Կարևոր դերերի համար պահեստային աշխատակիցների նախապատրաստում։

3. Փոխգործողություններ այլ կառույցների հետ

Պետական մարմինների հետ

- Արտակարգ իրավիճակների նախարարության հետ ուղիղ կապի ապահովում։
- Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության մեխանիզմներ։
- Ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների հետ հետադարձ կապի պահպանում։
- Պաշտոնական աղբյուրներից տեղեկատվության ստացման արագ ուղիների սահմանում։

Ոլորտային գործընկերների հետ

- Այլ մեդիա կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքում։
- Փոխադարձ օգնության ցանցի ձևավորում։
- Կոնտենտի փոխանակման մեխանիզմների մշակում։
- Համատեղ ռեսուրսների օգտագործման պլան։

Միջազգային կազմակերպությունների հետ

- Լրագրողների անվտանգության համար մասնագիտացված միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատում։
- Միջազգային մեդիա կազմակերպությունների հետ փոխգործակցության հնարավորությունների ուսումնասիրում։
- Արտակարգ իրավիճակներում աջակցություն տրամադրող դոնորների ցանկի կազմում։

4. Եթերի շարունակականության ապահովում

Տեխնիկական լուծումներ

- Հեռարձակման սարքավորումների պատշաճ պահպանում և պաշտպանություն։
- Այլընտրանքային հեռարձակման հնարավորությունների ապահովում (օնլայն ստրիմինգ, սոցիալական մեդիա ուղիղ հեռարձակումներ)։

- Տվյալների պահպանման և պահուստավորման համակարգեր (ամպային պահոցներ, արտաքին կրիչներ)։
- Ցածր տեխնիկական պահանջներ ունեցող հեռարձակման մեթոդների պատրաստում։

Բովանդակության կառավարում

- Ճգնաժամային իրավիճակներում հեռարձակման բովանդակության պլանավորում։
- Նախապես պատրաստված նյութերի պահուստի ապահովում։
- Արագ, բայց ճշգրիտ լրատվության մատուցման ընթացակարգեր։
- Տեղեկատվության ստուգման մեխանիզմներ սահմանափակ պայմաններում։

Կադրային ապահովում

- Խմբագիրների և լրագրողների փոխարինման պլան։
- Բազմաֆունկցիոնալ աշխատակիցների պատրաստում, ովքեր կարող են տարբեր դերեր կատարել։
- Կամավորների ներգրավման արագ մեխանիզմներ։

5. Տարհանման պլան

Նախապատրաստական քայլեր

- Տարհանման ուղիների և վայրերի նախապես որոշում։
- Անհրաժեշտ փաստաթղթերի և սարքավորումների ցանկի կազմում։
- Տարհանման պայուսակների պատրաստում (դոկումենտներ, առաջին օգնության պարագաներ, ջուր, սնունդ)։
- Տրանսպորտային միջոցների ապահովում։

Տարհանման ընթացակարգ

- Աշխատակիցների իրազեկման մեխանիզմ։
- Հավաքի վայրերի սահմանում։
- Պատասխանատուների նշանակում։
- Ընտանիքների հետ կապի պահպանման պլան։

Շարունակական գործունեություն տարհանման դեպքում

- Նվազագույն անհրաժեշտ սարքավորումների ցանկ տարհանման համար։
- Ժամանակավոր աշխատանքային տարածքների հնարավորությունների քարտեզագրում։
- Ապահով վայրից հեռարձակման պլան։
- Տվյալների և արխիվների պահպանման մեխանիզմներ։

6. Գործողությունների ստուգաթերթիկներ տարբեր սցենարների համար

Այս ստուգաթերթերը պետք է լինեն հստակ, կարճ և հասանելի բոլոր աշխատակիցներին:

1. Ռմբակոծման ժամանակ անմիջական քայլեր
2. Էլեկտրականության անջատման պարագայում գործողություններ
3. Ինտերնետ կապի խափանման դեպքում քայլեր
4. Տարհանման արագ ընթացակարգ
5. Առաջին օգնության ցուցումներ
6. Հրդեհի դեպքում գործողություններ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Պետական արձագանքող մարմինների հետ համագործակցություն
ՆԳՆ Փրկարար ծառայություն, Ոստիկանություն

Ինֆորմացիայի ստացում

- Օպերատիվ իրավիճակի մասին պաշտոնական տեղեկատվություն
- Վտանգավոր տարածքների քարտեզներ
- Տարհանման ուղիների և կետերի մասին տեղեկություններ
- Փրկարարական աշխատանքների ընթացքի հաղորդումներ

Հետադարձ կապ

- Բնակչությունից ստացված տեղեկատվության փոխանցում
- Վտանգավոր իրավիճակների մասին ահազանգեր
- Տարածքային խնդիրների լուսաբանում

Համագործակցության մեխանիզմներ

- ՆԳՆ մամուլի ծառայության հետ ուղիղ կապի հաստատում
- Շուրջօրյա կապի ապահովում հատուկ կոնտակտային անձանց հետ
- Պարբերական ճեպազրույցների կազմակերպում փրկարար ծառայության ներկայացուցիչների հետ
- Հատուկ էլ. փոստի/հեռախոսահամարի տրամադրում մեդիայի համար

2. Առողջապահական համակարգի հետ փոխգործակցություն
Առողջապահական մարմիններ և հիվանդանոցներ

Ինֆորմացիայի ստացում

- Վիրավորների քանակի և վիճակի մասին թարմացումներ
- Բուժօգնության հասանելիության մասին տեղեկություններ
- Սանիտարահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տվյալներ
- Առաջին օգնության վերաբերյալ հրահանգներ

Հետադարձ կապ

- Հրատապ բժշկական օգնության կարիք ունեցողների մասին ահազանգերի փոխանցում
- Առողջապահական հաստատությունների աշխատանքի լուսաբանում
- Բուժօգնության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում

Համագործակցության մեխանիզմներ

- Առողջապահության նախարարության և տեղական բժշկական հաստատությունների մամուլի ծառայությունների հետ կանոնավոր կապ
- Բժիշկների հետ պայմանավորվածություն՝ հրատապ մեկնաբանությունների համար
- Առողջապահական տեղեկատվական բյուլետենների պարբերական թողարկում

3. Կենսապահովման ծառայությունների հետ համագործակցություն
Հանրային ծառայություններ մատակարարող ընկերություններ

Ինֆորմացիայի ստացում

- Վթարների և անջատումների մասին նախազգուշական տեղեկություններ
- Վերականգնման աշխատանքների ժամանակացույց և ընթացք
- Այլընտրանքային մատակարարման կետերի մասին տեղեկություններ
- Անվտանգության հրահանգներ (գազի արտահոսքի, ջրի աղտոտման դեպքում)

Հետադարձ կապ

- Համայնքի բնակիչներից ստացված ահազանգերի փոխանցում
- Խնդիրների քարտեզագրում և հանրային լուսաբանում

4. Սանիտարական և թաղման ծառայություններ

Ինֆորմացիայի ստացում

- Սանիտարական վիճակի մասին գնահատականներ
- Համաճարակային վտանգների մասին զգուշացումներ
- Թաղման ծառայությունների հասանելիության մասին տեղեկություններ
- Սանիտարական անվտանգության վերաբերյալ ուղեցույցներ

Հետադարձ կապ

- Հանրային իրազեկման նյութերի տարածում
- Բնակչության հուզող սանիտարական խնդիրների բարձրաձայնում

5. Ճգնաժամային համագործակցության կառավարման մեխանիզմներ

Համակարգում

- Եռամակարդակ կապի համակարգի ստեղծում
- Առաջին մակարդակ - շուրջօրյա կապի պատասխանատուներ (հեռախոսահամարներ, էլ. հասցեներ)
- Երկրորդ մակարդակ - գործադիր մարմինների ղեկավարներ
- Երրորդ մակարդակ - բարձրագույն ղեկավարություն
- Համաձայնեցված լրատվական քաղաքականության մշակում

- Տերմինաբանության միասնականացում
- Ապատեղեկատվության դեմ պայքարի համատեղ մեխանիզմներ

Տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր

- Օրական հաղորդակցության ժամանակացույցի սահմանում
- Հրատապ հաղորդագրությունների փոխանակման արագ ուղիներ
- Փոխադարձ վստահության մեխանիզմների ներդրում
- Տեղեկատվության ստուգման ընթացակարգեր

Համատեղ կարողությունների զարգացում

- Համատեղ վերապատրաստումների և վարժանքների անցկացում
- Փորձի փոխանակման հարթակների ստեղծում
- Կրիտիկական ենթակառուցվածքների համատեղ պաշտպանություն

6. Գործնական գործիքակազմ
Ճգնաժամային արձագանքող մարմինների հետ աշխատանքի համար

- Կոնտակտային տվյալների հիերարխիկ բազա
- Առաջնային կոնտակտներ (շուրջօրյա)
- Երկրորդական կոնտակտներ
- Մասնագիտական կոնտակտներ (ըստ ոլորտների)
- Տեղեկատվական հարցումների ստանդարտ ձևաթղթեր
- Ճգնաժամային հաղորդագրությունների ձևանմուշներ
- Համագործակցության հուշագրերի օրինակներ

Տեղեկատվության արագ տարածման մեխանիզմներ

- Հատուկ հաստատված աղբյուրների ցանկ
- Ճգնաժամային նորությունների արագ ստուգման ուղեցույց
- Տեղեկատվության առաջնահերթության որոշման չափանիշներ

Մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ

- Համագործակցության արդյունավետության գնահատման ձևաթղթեր
- Պարբերական վերանայման մեխանիզմներ
- Փորձից դասեր քաղելու և փոփոխություններ իրականացնելու գործընթաց

ՄԵԴԻԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Նախապատրաստական փուլ

1.1. Կապերի հաստատում և ինստիտուցիոնալ հարաբերություններ

- **Փոխըմբռնման հուշագրի կնքում**, որը կսահմանի՝
  - Համագործակցության իրավական շրջանակը
  - Տեղեկատվության փոխանակման սկզբունքները
  - Կողմերի պարտավորությունները
  - Գաղտնիության պահանջները
- **Կոնտակտային անձանց նշանակում**
  - ՆԳՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում մեդիայի հետ աշխատող պատասխանատու
  - Ոստիկանության մամուլի ծառայության պատասխանատու
  - Փրկարար ծառայության մամուլի ծառայության պատասխանատու
  - Մեդիայի կողմից՝ ՆԳՆ հետ աշխատող նշանակված լրագրող
- **Հստակ կոնտակտային տվյալների բազայի ստեղծում**
  - Շուրջօրյա հեռախոսահամարներ
  - Պահեստային հեռախոսահամարներ
  - Ռադիոկապի հաճախականություններ (եթե կիրառելի է)
  - Էլեկտրոնային հասցեներ
  - Տարբեր ստորաբաժանումների կոնտակտներ
  - Հիերարխիայի տարբեր մակարդակների ներկայացուցիչների կոնտակտներ

1.2. Համատեղ վերապատրաստում և վարժանքներ

- **Լրագրողների մասնագիտացված վերապատրաստում**
  - Արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոններ
  - Պատերազմական գոտում լրագրողական աշխատանքի առանձնահատկություններ
  - Առաջին օգնության հմտություններ
  - Ռազմական տերմինաբանության ուսուցում
- **Համատեղ սիմուլյացիոն վարժանքներ**
  - Տեղեկատվության փոխանակման վարժանքներ
  - Ճգնաժամային հաղորդակցության սիմուլյացիաներ
  - Դաշտային աշխատանքի սիմուլյացիաներ

1.3. Տեղեկատվական ենթակառուցվածքի նախապատրաստում

- **Ճգնաժամային իրավիճակների համար պատրաստված տեղեկատվական պլատֆորմ**
- ՆԳՆ-ի հետ պաշտոնական տեղեկատվության փոխանակման համար հատուկ հարթակ
- Ապահով կապուղիների ապահովում
- Տեղեկատվության ստուգման մեխանիզմներ
- **Համատեղ տվյալների շտեմարանի ստեղծում**

- Տարածքային քարտեզներ
- Ճգնաժամային օբյեկտների տեղակայման պլաններ
- Պատմական տվյալներ նախկին արտակարգ իրավիճակների մասին

2. Ճգնաժամի ընթացքում համագործակցություն
2.1. Օպերատիվ տեղեկատվության փոխանակում

- **Ամենօրյա ստանդարտ տեղեկատվության ստացման մեխանիզմներ**
- Առավոտյան և երեկոյան բրիֆինգներ
- Պաշտոնական հայտարարությունների և թարմացումների ստացում
- Տարածքային իրավիճակի մասին հաղորդագրություններ
- **Հրատապ տեղեկատվության արագ փոխանակման մեխանիզմներ**
- Վտանգի մասին անհապաղ տեղեկացման համակարգ
- Ռմբակոծման կամ հարձակման դեպքում ահազանգման պրոտոկոլ
- Հրատապ տարհանման դեպքում գործողությունների պլան
- **Տեղեկատվության դասակարգում ըստ գաղտնիության աստիճանի**
- Հանրային տեղեկատվություն
- Սահմանափակ տարածման տեղեկատվություն
- Գաղտնի տեղեկատվություն (որը չի կարող հրապարակվել)
- Տեղեկատվության հրապարակման ժամկետների հստակեցում

2.2. Հատուկ հարցման ընթացակարգեր

- **Մեդիայի հարցումներին արձագանքման արձանագրություն**
- Հարցումների ձևաթղթի ստանդարտացում
- Հարցումների առաջնահերթության սահմանում
- Պատասխանների ժամկետների համաձայնեցում
- **Տեղեկատվության հստակեցման մեխանիզմներ**
- Շփոթեցնող կամ հակասական տեղեկատվության պարզաբանման ուղիներ
- Փաստերի ստուգման արագացված գործընթաց
- Ապատեղեկատվության վերաբերյալ խորհրդատվության ստացում

2.3. Դաշտային աշխատանքի համակարգում

- **Լրագրողների մուտքի ապահովում ՆԳՆ գործողությունների տարածք**
- Հավատարմագրման համակարգ
- Անվտանգության բրիֆինգների ապահովում
- Մուտքի թույլտվությունների տրամադրման պրոտոկոլներ
- **ՆԳՆ օպերատիվ անձնակազմի և լրագրողների համատեղ աշխատանքի կանոններ**
- Ոստիկանության գործողությունների լուսաբանման կարգ
- Փրկարարական աշխատանքների լուսաբանման կարգ
- Ուղեկցման կանոններ վտանգավոր տարածքներում

- **Անվտանգության ապահովում**
- Լրագրողների անվտանգության ապահովման մեխանիզմներ
- Վտանգավոր տարածքների մասին նախազգուշացումներ
- Պաշտպանական միջոցների տրամադրում (զրահաբաճկոններ, սաղավարտներ)

2.4. Համատեղ հաղորդակցություն

- **Համաձայնեցված հաղորդագրությունների մշակում**
- Կարևոր հայտարարությունների համաձայնեցում
- Տերմինաբանության միասնական օգտագործում
- Կրիտիկական իրավիճակներում համատեղ ուղերձների ձևակերպում
- **Ճգնաժամային հաղորդակցության համակարգում**
- Պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվության տարանջատում
- Ապատեղեկատվության դեմ համատեղ պայքար
- Հանրային խուճապի կանխարգելմանն ուղղված ջանքերի համակարգում

3. Կոնկրետ սցենարներ և արձագանքման պլաններ
3.1. Ռմբակոծության/հրետակոծության դեպքում

- **ՆԳՆ-ից ստացվող տեղեկատվություն**
- Վնասված տարածքների մասին տվյալներ
- Զոհերի և վիրավորների մասին թարմացումներ
- Անվտանգ տարածքների մասին հրահանգներ
- Ապաստարանների տեղակայման մասին տեղեկություններ
- **Մեդիայի գործողություններ**
- Պաշտոնական տեղեկատվության արագ տարածում
- Բնակչության համար անվտանգության հրահանգների հեռարձակում
- ՆԳՆ հրահանգների հստակ փոխանցում
- Խուճապ չառաջացնող լուսաբանում

3.2. Մարդկանց տարհանման դեպքում

- **ՆԳՆ-ից ստացվող տեղեկատվություն**
- Տարհանման ուղիներ և ժամանակացույց
- Տարհանման կետերի տեղակայություն
- Տարհանման կանոններ և ընթացակարգեր
- Անհրաժեշտ իրերի ցանկ
- **Մեդիայի գործողություններ**
- Տարհանման վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տարածում
- Տարհանման կետերում տեղեկատվական աջակցություն
- Կորած անձանց որոնման հարցում աջակցություն
- Կայուն և համակարգված տեղեկատվության տրամադրում

3.3. Ահաբեկչական գործողությունների դեպքում

- **ՆԳՆ-ից ստացվող տեղեկատվություն**
- Սահմանափակ տեղեկատվություն՝ չխոչընդոտելու համար գործողություններին
- Հստակ հրահանգներ լուսաբանման սահմանափակումների մասին
- Վտանգավոր տարածքների մասին տեղեկություններ
- **Մեդիայի գործողություններ**
- Անվտանգության ուժերի գործողությունների չխոչընդոտում
- Ոչ մի տեղեկատվություն, որը կարող է վտանգել պատանդներին կամ անվտանգության ուժերին
- Միայն պաշտոնական հաստատված տեղեկատվության տարածում

3.4. Համացանցի և կապի խափանման դեպքում

- **ՆԳՆ-ից ստացվող տեղեկատվություն**
- Այլընտրանքային կապի միջոցների մասին տեղեկատվություն
- Կապի վերականգնման ժամկետների կանխատեսումներ
- Արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկությունների փոխանցում ռադիոկապով
- **Մեդիայի գործողություններ**
- Այլընտրանքային հաղորդակցության միջոցների օգտագործում (ռադիո, արբանյակային կապ)
- Փաստաթղթային տեսքով տեղեկատվության տարածում
- Տեղական ինֆորմացիոն կետերի ստեղծում

4. Համագործակցության գործիքակազմ

4.1. Ստանդարտ գործառնական ընթացակարգեր

- **Օրական հաղորդակցության ընթացակարգ**
- Ամենօրյա բրիֆինգների ժամանակացույց
- Պաշտոնական տեղեկատվության փոխանակման քայլեր
- Հաղորդագրությունների համաձայնեցման ընթացակարգ
- **Արտակարգ իրավիճակների ընթացակարգ**
- Հրատապ տեղեկատվության փոխանակման ընթացակարգ
- Արագ արձագանքման մեխանիզմներ
- Որոշումների կայացման արագացված մեխանիզմներ

4.2. Փաստաթղթային գործիքակազմ

- **Տեղեկատվության հարցման ձևաթղթեր**

Հարցման համար *[ավտոմատ համարակալում]* Ամսաթիվ և ժամ: Կազմակերպության անվանումը:

Պատասխանատու լրագրող:
Կոնտակտային տվյալներ:
Հարցման տեսակը:
Հրատապության աստիճան:

- Ցածր
- Միջին
- Բարձր
- Ճգնաժամային

Անհրաժեշտ տեղեկատվություն:
Օգտագործման նպատակը:
Հրապարակման նախատեսվող ժամկետ:

- **Ճգնաժամային իրավիճակի արձանագրման ձևաթուղթ**

Դեպքի համար: *[ավտոմատ համարակալում]*
Դեպքի ամսաթիվ և ժամ:
Դեպքի վայր:
Դեպքի բնույթը:
Ականատեսներ:
Վնասներ:
ՆԳՆ պատասխանատու:
Մեդիայի պատասխանատու:
Ձեռնարկված միջոցառումներ:
Լուսանկարներ/տեսանյութեր: *[Այո/Ոչ]*
Հետագա քայլեր:

- **Դաշտային աշխատանքի թույլտվության ձևաթուղթ**

Թույլտվություն № [համար]
Վավեր է [ամսաթիվ] մինչև [ամսաթիվ]
Լրագրողի անուն, ազգանուն:
Մեդիա կազմակերպություն:
Անձը հաստատող փաստաթուղթ:
Մուտքի թույլատրված տարածք:
Սահմանափակումներ:
Պատասխանատու ՆԳՆ աշխատակից:
Ստորագրություն:

4.3. Ապատեղեկատվության դեմ պայքարի համատեղ մեխանիզմներ

- **Փաստերի արագ ստուգման խումբ**
- Մեդիայի և ՆԳՆ ներկայացուցիչներից կազմված համատեղ խումբ
- 24/7 աշխատանքային ռեժիմ ճգնաժամի ժամանակ
- Ապատեղեկատվության արագ հերքման մեխանիզմներ
- **Պաշտոնական տեղեկատվության հարթակ**
- Հավաստի տեղեկատվության միասնական աղբյուր
- Հաստատված նորությունների արխիվ
- Հաճախակի տրվող հարցերի բաժին

5. Հետճգնաժամային համագործակցություն

5.1. Փորձի վերլուծություն

- **Համատեղ քննարկումներ և դասեր**
- Համագործակցության արդյունավետության գնահատում
- Խնդիրների և բացթողումների վերհանում
- Լավագույն փորձի ամփոփում
- **Ճշգրտումների ներդրում ապագա համագործակցության մեջ**
- Փոխըմբռնման հուշագրի թարմացում
- Ընթացակարգերի բարելավում
- Նոր գործիքների ներդրում

5.2. Երկարաժամկետ հարաբերությունների զարգացում

- **Համատեղ վերապատրաստումների շարունակում**
- Պարբերական սեմինարներ
- Փորձի փոխանակման հանդիպումներ
- Միջազգային փորձի ուսումնասիրություն
- **Համատեղ պատրաստվածության պլանների մշակում**
- Սցենարների պարբերական թարմացում
- Նոր տեխնոլոգիաների ներդրում
- Համագործակցության շարունակական կատարելագործում

ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱՅԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ

1. Սահմանային անվտանգության ռիսկեր

- Կրակոցների և ռմբակոծությունների պարագայում լրատվական գործունեության ապահովում
- Մարտական դրոնների սպառնալիքների գնահատում
- Լրագրողների և աշխատակազմի անվտանգության արձանագրություններ
- Ահաբեկչական սպառնալիքների գնահատում և կանխարգելում

2. Բնական և տեխնածին աղետներ

- Երկրաշարժեր, սողանքներ, հեղեղներ, երաշտ
- Տարածաշրջանին բնորոշ այլ բնական աղետներ
- Տեխնածին վթարների ռիսկեր (արդյունաբերական վթարներ)
- Կլիմայի փոփոխության հետևանքներին պատրաստվածություն

3. Համաճարակներ և առողջապահական ճգնաժամեր

- Համաճարակների ընթացքում գործունեության ապահովում
- Աշխատակազմի առողջության պահպանման ռազմավարություններ
- Հեռավար աշխատանքի կազմակերպման պլան

4. Ենթակառուցվածքային ռիսկեր

- Էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումներ
- Գազամատակարարման խնդիրներ
- Հրդեհային անվտանգություն
- Ջրամատակարարման խնդիրներ

5. Ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

- Յուրաքանչյուր ռիսկի հավանականություն (1-5 սանդղակով)
- Յուրաքանչյուր ռիսկի ազդեցության մակարդակ (1-5 սանդղակով)
- Ընդհանուր ռիսկի գործակից (հավանականություն × ազդեցություն)
- Ռիսկերի քարտեզագրում և առաջնահերթությունների սահմանում

6. Մեղմացման ռազմավարություններ

- Այլընտրանքային աշխատավայրերի նախապատրաստում
- Բեքափային սարքավորումների և համակարգերի ապահովում
- Արագ արձագանքման թիմի ձևավորում
- Անձնակազմի վերապատրաստում արտակարգ իրավիճակներում գործելու համար
- Արտաքին աջակցության ցանցի ստեղծում

7. Կրիտիկական գործողությունների պլան

- Գործունեության շարունակականության ապահովման պլան
- Արտակարգ իրավիճակներում հաղորդակցության արձանագրություններ
- Տեղեկատվության հաղորդման չընդհատվող շղթայի ապահովում
- Վերականգնման ժամանակացույց յուրաքանչյուր սցենարի համար

Տավուշ մեդիայի խոցելիության գնահատման պլան՝ տարածաշրջանային առանձնահատկություններով

1. Տավուշի առանձնահատկություններ և լրացուցիչ ռիսկեր

Սահմանազատման հետ կապված մարտահրավերներ

- Սահմանային նոր գծանշումներից հետո բնակավայրերի խոցելիության գնահատում
- Անվտանգ տեղաշարժման ուղիների քարտեզագրում լրագրողների համար
- Ինչպես աշխատել սահմանամերձ «մոխրագոտիներում», որտեղ իրավական կարգավիճակը անորոշ է
- Փոփոխվող ազդեցության գոտիների շարունակական մոնիթորինգ

Բնակչության հետ աշխատանք

- Հեռավոր գյուղերից տեղեկատվության հավաքագրման անվտանգ ուղիներ
- Թիրախային հանրության կարիքների գնահատում՝ ճգնաժամային հաղորդակցության համար
- Տեղական իշխանությունների հետ արտակարգ իրավիճակների հաղորդակցության արձանագրություններ

Աշխարհագրական խոցելիություններ

- Լեռնային տեղանքում կապի խնդիրների հաղթահարում
- Սահմանամերձ անտառային տարածքների հետ կապված ռիսկեր
- Տրանսպորտային ուղիների սահմանափակումների հաշվառում արտակարգ իրավիճակներում

2. Խուճապի կանխարգելման ուղիներ և գործիքակազմ

Պրոակտիվ հաղորդակցություն

- Ստուգված տեղեկատվության արագ տարածման մեխանիզմներ
- Պաշտոնական տեղեկատվության հասանելիության ապահովում՝ նույնիսկ կապի խափանումների պայմաններում
- Իրավիճակի վերաբերյալ կանոնավոր թարմացումների մատուցման ժամանակացույց

Հուսալի տեղեկատվական ցանց

- Տեղական աղբյուրների վստահելի ցանցի ստեղծում և պահպանում
- Լուրերի ստուգման արագ արձանագրություն ահազանգերի ժամանակ
- Ապատեղեկատվության հակազդման արագ արձագանքման թիմ

Կրթական աշխատանք

- Բնակչության իրազեկում արտակարգ իրավիճակներում գործողությունների մասին
- Աշխատանքային ուղեցույց, թե ինչպես ներկայացնել ճգնաժամային իրավիճակները՝ առանց խուճապ առաջացնելու
- Համայնքային խմբերի հետ համագործակցություն՝ տեղեկատվության տարածման համար

3. Ռազմական գործողությունների հետ կապված առանձնահատուկ միջոցառումներ

Լրագրողների անվտանգություն

- Զինված հակամարտության պայմաններում աշխատելու վերապատրաստումներ
- Գործնական պարապմունքներ առաջնագծում աշխատելու համար
- Առաջին օգնության և ինքնապաշտպանության հմտությունների զարգացում
- Պաշտպանական հանդերձանքի (զրահաբաճկոններ, սաղավարտներ) ապահովում

Տեղեկատվական անվտանգություն

- Զգայուն տեղեկատվության (զորքերի տեղաշարժեր, ռազմական օբյեկտներ) մասին հաղորդումների արձանագրություններ
- Ուղիղ եթերների անվտանգության ապահովում
- GPS տվյալների և մետատվյալների կառավարում

Բնակչության պաշտպանություն

- Ապաստարանների վերաբերյալ տեղեկատվության տարածում
- Տարհանման երթուղիների քարտեզագրում և հրապարակում
- Շտապ բժշկական օգնության կետերի և ռեսուրսների մասին տեղեկատվության տրամադրում

4. Ենթակառուցվածքային դիմացկունության ապահովում

Էներգետիկ ինքնաբավություն

- Արևային վահանակների տեղադրում՝ էլեկտրաէներգիայի այլընտրանքային աղբյուրների համար
- Շարժական գեներատորների ձեռքբերում

- Սարքավորումների լիցքավորման արտակարգ պլան

Ինտերնետ կապի այլընտրանքային լուծումներ

- Արբանյակային ինտերնետ կապի համակարգերի տեղադրում
- Ռադիոհաղորդակցության պահուստային լուծումներ
- Ցանցից դուրս աշխատելու հնարավորությունների ապահովում

Տվյալների պահպանում և պաշտպանություն

- Ամպային պահոցների օգտագործում՝ կրիտիկական նյութերի համար
- Շիֆրավորման լուծումների ներդրում
- Կիբերհարձակումներից պաշտպանվելու արձանագրություններ

5. Գործողությունների ժամանակացույց և պատասխանատուներ

Անմիջական միջոցառումներ (1-3 ամիս)

- Արտակարգ իրավիճակների արձագանքման թիմի ձևավորում
- Անձնակազմի բազային վերապատրաստում
- Նվազագույն անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում

Միջնաժամկետ միջոցառումներ (3-6 ամիս)

- Համայնքային կապերի ցանցի զարգացում
- Ուղեցույցների և արձանագրությունների մշակում
- Տեխնիկական ենթակառուցվածքի ամրապնդում

Երկարաժամկետ միջոցառումներ (6-12 ամիս)

- Կադրերի պատրաստման համակարգի զարգացում
- Տարածաշրջանային մեդիա ռեսուրսների հետ համագործակցության ընդլայնում
- Խոցելիության գնահատման պարբերական վերանայում

5. Ճգնաժամի կառավարման գործիքակազմ
Ռիսկերի դասակարգման և արձագանքման մատրիցա

Ռիսկի մակարդակ	Օրինակ	Արձագանքման տիպ	Կոնկրետ գործողություններ
Ծայրահեղ բարձր	Ուղղակի կրակի տակ	Անմիջապես տարհանում	Նախորոշված ապաստարանների օգտագործում, անձնակազմի ստուգում
Բարձր	Ռմբակոծություն տարածաշրջանում	Սահմանափակ լուսաբանում	Միայն անվտանգ դիրքերից, պարտադիր պաշտպանական հանդերձանք
Միջին	Ապակայունացված իրավիճակ	Զգուշավոր լուսաբանում	Զույգերով աշխատանք, մշտական կապ պահելու պայմանով
Ցածր	Լարված իրավիճակ	Նորմալ ռեժիմ՝ հավելյալ զգուշավորությամբ	Տեղական իշխանությունների հետ կանոնավոր կապ